



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ և ԶԳՈՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՄԵՅԱՄԻ ԲՈՒՌՆԵՐ
ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ



ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԲՆՈՒԱՅՈՒՆՆԸՆԳԵՐՈՐԴ

2 ՅՈՒՆԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ
= 1872 =

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ԽԵ

2 ՅՈՒՆԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶՍՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. (ԱՎՃԱՄԱՆԱԿԵԱՅ ԿԱՐԳԵԱՂ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Նորոգ ընտրութիւն Աղղ. վարչութեան Քաղ. Ժողովոյ :
2. Ընտրութիւն նորոգ դիւանի Ընդհ. Ժողովոյ :
3. Կոնդակ վեհ. Կաթուղիկոսին :
4. Ատենական կանոնադրութիւն :
5. Կաթուղիկոսական և Պատրիարքական յարաբերութիւնք :

Ատենական բացման որոշեալ ժամն անցնելով՝ դեռ Ժողովոյն դիւանի անդամներէն ոչ ոք ներկայացած էր, ուստի առժամանակեայ Ատենապետութեան պաշտօնի հրաւիրուեցաւ Ղաղարտեան Ք. ԷՖ. որ ժամը 7 ին ատեն բացաւ ի ներկայութեան 54 Երեսփոխանաց մեծամասնութեան Ժողովոյ, որոց վերջին թիւը 75 ի հասաւ :

Նոյնպէս առժամանակեայ Ատենադպիր կարգեցաւ դարձեալ Կրճիկեան Յ. ԷՖ. :

Ատենապետ էՖ. Ժողովոյն կը ներկայացընէ երեք երեսփոխանաց նամակներ, որք Ժողովն բացակայ մնալու հարկադրուած ըլլալն ծանուցած էին .

Արչակ Յակոբոս էՖ. ճանապարհորդութեան պատճառաւ բացակայ .

Տատեան Յարութիւն էՖ. անձնական տկարութեան պատճառաւ բացակայ .
Պէտեան Կարապետ էՖ. հիւանդ ունենալուն պատճառաւ բացակայ .

Յիշեալ նամակներն կարդացուելէ ետեւ, Ատենապետ էՖ. կը ծանուցանէ թէ պատրաստ ատենադրութիւն չը կայ Ժողովոյն դիտողութեան ենթարկելու, և կանցնի անմիջապէս օրուան կարգի առաջին խնդրոյն, որ է Քաղ. Ժողովոյ ընտրութիւնը :

ՆՈՐՈՒԹ ԸՆՏՐՈՒԹԻՆՆ ԱԶԳ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՑ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քաղ. Ժողովոյ ընտրութեան վիճարանութիւնը նախորդ նիստէն զոյ-

ուած և գաղանի քուէարկութիւն ընել որոշուած է . ուստի Գիւանը կը պարտաւորի այսօր քուէարկել սա՛ առաջարկութիւնը թէ : Քաղ. Ժողովոյ ընտրութիւնը Սահմանադրութեան համեմատ կատարուի՞ թէ վերաքննութեամբ :

Օտեան Գ. էֆ. խօսք կը խնդրէ և սրտասուխան կառնու Գիւանն թէ՛ միայն քուէարկութեան համար խօսք կրնայ տրուի իրեն , և ոչ թէ վիճարանութեան . վասն զի նախորդ նիստին վիճարանութիւնը դրոշմած է :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Վիճարանութեան գոցուած ըլլալը գիտնալով հանդերձ խօսք ուզեցի բուն խնդրոյն վրայ , մի միայն այն սրտաճառաւ որ նախորդ վիճարանութեանց չը կրցայ ներկայ գտնուիլ , որուն սրտաճառը ներեցիք ինձ որ չը յայտնեմ . ասոր համար խօսք ուզեցի և դարձեալ կուզեմ , ազատ ամեն տեսակ կիրքերէ խօսելու համար , թերևս իմ ըսելիքներս օգուտ մը ընեն . եթէ Ժողովն ուզէ լսել կը խօսիմ , եթէ ոչ , կը լռեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օտեան էֆէնտի խընդիրը քուէի կը գնեմ հասկնալու համար թէ արդեօք Ժողովը կուզէ՞ բացառիկ կերպիւ Օտեան էֆէնտիին արտօնութիւն տալ բուն խընդրոյն վրայ խօսելու :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. էֆ. — Նախորդ նիստին վիճարանութեան դադարումն որոշուած է . բայց Օտեան էֆ. բացառիկ կերպիւ խօսիլ կուզէ . եթէ խօսի նոր լոյս մը պիտի տայ խնդրոյն վրայ . ի հարկէ ես ալ լուսաւորուելով խօսք կուեննամ . ուստի մենք ալ այդ արտօնութիւնը կուզենք :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Չէ՞ք ներքեր , Օգտէն էֆ. որ խօսիմ , գո՛նէ չէ՞ք ներքեր որ խօսելու կամք ուեննալա քուէի դրուի :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. էֆ. — Եթէ ձեզ արտօնութիւն պիտի տրուի խօսելու , ես ալ և ուրիշներն ալ կուզենք այդ արտօնութիւնը :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Ես իսկ չեմ ընդունիր որ միայն ես խօսիմ . կուզէ՞ք որ քուէի դրուի :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. էֆ. — Եթէ Ժողովն ետ կառնու իւր որոշումը , չէ՞ թէ բացառիկ կերպով , այլ ամենուն համար վերստին վիճարանութիւնը պէտք է բաց ըլլայ :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. էֆ. — Ստույգ է որ նախընթաց նիստին որոշմամբ վիճարանութիւնը գոցուած է . բայց Օտեան էֆ. վիճարանու-

թեան գոցուած ըլլալը զիտնալով հանդերձ խօսք խնդրեց , յայտնելով թէ նախորդ վիճարանութեանց ինքը ներկայ չէ կրցած գտնուիլ , և յաւելցուց իսկ որ եթէ Ժողովը չուզէ խօսք տալ , լուսութիւն պիտի պահէ : Ուստի պէտք է քուէի դրուի . եթէ Ժողովն ընդունի՝ վիճարանութիւնը նորէն բացուած կըլլայ :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Եթէ բողոքներ կան քուէի դրուելուն դէմ , պատրաստ եմ խօսքս ետ առնուլ :

ՊԷԿԵԱՆ Թ. էֆ. — Ժողովը նախընթաց նիստին վիճարանութիւնը դադրեցուցած էր և խնդիրը քուէի պիտի դրուէր , բայց դժբաղդարար քուէարկութիւնը խախտուեցաւ , որ Ժողովոյն դէմ հարուած մ'էր : Ինչ և իցէ , այսօր Օտեան էֆ. խօսք կուզէ բուն խնդրոյն վրայ նոր լոյս մը յայտնելու համար :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — (միջանկեալ կերպով) Ես լոյս բառը չը դորձածեցի :

ՊԷԿԵԱՆ Թ. էֆ. — (չարունակելով) Ձեր կարծիքը պիտի յայտնէր , որ հարկաւ լոյս պիտի տայ Ժողովին : Մենք պատրաստ ենք ընդունիլ որ Օտեան էֆ. խօսի . բայց որովհետև նախորդ նիստին վիճարանութեան դադրիւր որոշուած է , կրնայ ըլլալ որ երեսօխտան մը վիճարանութեան գոց ըլլալը զիտնալով այսօր չը ներկայացած ըլլայ , որ եթէ զիտնար թէ նորէն վիճարանութիւն պիտի բացուի , խօսիլ ուզէր , ասոր համար այն բացակայ երեսօխտանին զրկանք պիտի ըլլայ . ուստի Ժողովն եթէ պիտի ընդունի գոցուած վիճարանութիւնը նորէն բանալ Օտեան էֆէնտիի խօսք տալով , պէտք է վիճարանութեան բաց ըլլալը խնդրոց կարգն անցնել և յաջորդ նիստին թողուլ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. էֆ. — Արդէն խնդրոց կարգին մէջ կը գտնուի :

ՊԷԿԵԱՆ Թ. էֆ. — Այո՛ , խնդրոց կարգին մէջ է Քաղ. Ժողովոյ ընտրութիւնը . բայց անցեալ նիստին վիճարանութեան վերջացած ըլլալը որոշուած է , և ամեն երեսօխտան այնպէս գիտէ և լսած է որ միայն քուէի պիտի դրուի . քուէարկութիւնը խախտուել և յաջորդ նիստին ուղած ատենարանին բերել և անոր ձեռքով ազդեցութիւն բանեցնել չըլլար : Եթէ վիճարանութիւնը նորէն պիտի բացուի , պէտք է որ յաջորդ նիստին մնայ , որպէս զի այսօր-

ուան ներկայ չը գտնուող և խօսիլ ազդեցերը յաջորդ նիստին գան խօսին :

ՓՈՓՈՋԵԱՆ Ս. էֆ. — Թէ որ յիշենք նախորդ նիստին վերջանալուն մտ սրտասուած գէղեցերը , այսօր այս խօսքերը բնաւ չը պիտի ընկինք . ի սէր Ազգին կառաջարկեմ որ որոշուած քուէարկութիւնը կատարուի լմննայ : Եթէ այս չընէք , ուրիշ անգամ ալ սասնկ պիտի ըլլայ : Ես կը բողոքեմ եթէ վիճարանութեան համար Օտեան էֆէնտիի խօսք տալու կամ չտալու առաջարկութիւնը քուէի դրուի :

ՕՏԵԱՆ Գ. էֆ. — Արդէն յայտարարութիւն ըրի որ եթէ բողոքող ըլլար՝ առաջարկութիւնս ետ պիտի առնէի : Այլ միայն բողոքող եղաւ , այլ և զրկանք և ազդեցութիւն բառերը արտասանուեցան : Կ'ընդունիմ որ վիճարանութիւն մը գոցուելէ ետև արդիւեալ է նորէն անոր վրայ խօսիլ , թէ և ուրիշ անգամներ բացառութիւն եղած է թերևս նոյն իսկ բողոքողաց կողմէ . բայց ես չեմ պահանջեր այդ թույլտուութիւնը , միայն կը ցատիմ որ այս խնդրոյն վրայ իմ կարծիքներս չը կրցի յայտնել : Ալ խնդիրն սպառած է ինձի համար , և խօսք չուենիմ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. էֆ. — Պէկեան էֆ. բացակայ երեսօխտանաց իրաւունքը կը պաշտպանէ ըսելով թէ՛ ըստ որում նախորդ նիստին վիճարանութիւնը գոցուած է , թերևս գտնուին այնպիսի երեսօխտաններ , որ չը գիտնալով թէ նորէն վիճարանութիւն պիտի ըլլայ չեն ներկայացած իրենց գոտսերը յոռաջ բերելու : Թէ և արդէն խնդրոց կարգին մէջ կը գտնուի Քաղ. Ժողովոյ ընտրութեան խնդիրը , որ ըսել է թէ շարունակութեան մէջ է , բայց Գիւանն անցեալ նիստին ճնշման տակ դորձեց վիճարանութիւնը գոցելով . ես պիտի բողոքէի այս ճնշման դէմ . գիւան մը պէտք չէ երկնչի ո՛չ ծախահարութիւններէ և ո՛չ ակնածութիւններէ . կըսեմ թէ Ժողովը դեռ չէ որոշած՝ վիճարանութիւնը գոց է թէ բաց , ես բացառութիւն ընդունողներէն չեմ . կառաջարկեմ որ վիճարանութիւնը շարունակելի է թէ ոչ քուէի դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առաջարկութիւն ընողն Օտեան էֆ. էր . նա ետ առաւ իւր առաջարկութիւնը . ուստի Գիւանը չը կրնար քուէի դրուել վիճարանութիւնը :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. էֆ. — Արդէն ըսի և նորէն

կըսեմ թէ նախորդ նիստին Գիւանը ճնշման տակ դորձեց . այն խնդիրը՝ որ գոցուելու վիճակի չէր հասած , գոցեց . ձեր պարտքն է , Ատենապետ էֆ. այս առաջարկութիւնս քուէի դնել :

ՔԱՆԻ ՄԻ ՉԱՅՆԵՐ. — Ոչ , ո՛չ , չըլլար :

ԻՍԹԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. էֆ. — Սահմանադրութիւնը սրտազամ չէ՛ , վերաքննութեան մէջ է արդէն : Օտեան էֆէնտիի խօսք տալու է որ խնդիրը լուծարանուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնն արդէն գոցուած է . չեմ կրնար բուն խնդրոյն վրայ խօսք տալ :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. էֆ. — Օտեան էֆ. իւր առաջարկութիւնը ետ առած ըլլալով՝ Գիւանն ուրիշ բան չմնար ընելիք , բայց եթէ ընտրութեան խնդիրը քուէի դնել :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. էֆ. — Օտեան էֆ. ետ առաւ իւր առաջարկութիւնը , բայց որովհետև երեսօխտան մը բողոքելու իրաւունք ունի , նոյն իրաւամբ կը բողոքեմ որ գոցուած վիճարանութիւն մը նորէն բանալու համար երեսօխտանի մը կողմէ եղած առաջարկութեան դէմ կը դրուի , առանց Ժողովոյն կամքը հարցնելու . կը խնդրեմ որ այս բողոքս արձանագրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր բողոքը անշուշտ կանցնի արձանագրութեան մէջ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. էֆ. — Նախորդ նիստին Քաղ. Ժողովոյ ընտրութեան վիճարանութիւնը ճնշման տակ գոցուեցաւ . այն խնդիրը՝ որ գոցուելու վիճակի մէջ չէր , գոցեց Գիւանը , ուստի ես կառաջարկեմ և ինչպէս ուրիշներ ալ կան ուզող , թէ վիճարանութիւնը քուէի դրուի . Ատենապետ էֆ. այս է միայն ձեր պարտքը :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ. էֆ. — Կը կրկնեմ ի՝ վիճակն էֆ. առաջարկութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութեան գոցուած ըլլալը ընդունուելէ ետև՝ նորէն քուէի չեմ կրնար դնել : Քուէարկութիւն մը ունինք ընելու Քաղ. Ժողովոյ ընտրութեան վրայ , այն է թէ օրնտրութիւնը Սահմանադրութեան համեմատ կատարուի թէ վերաքննութեամբ , և որովհետև Ժողովոյն մեծամասնութիւնը առջին նիստին գաղտնի քուէի դնել որոշած էր այն առաջարկութիւնը , ուստի Գիւանը կը պար-

տաւարի յարգել այս որոշումը և քուէարկու-
թեան ձեռնարկել :

ՂԵՒՈՆԴ ՎԱԳՊ ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ. — Ան-
ցեալ նիւտին վիճարանութիւնը մեծազոյն մա-
սին որոշմամբ գոցուելէ ետև, ընտրութեան
խնդիրը քուէի դրուելու միջոցին, դիւանին
կողմէ առաջարկուած քուէարկութեան ձևն
անյարմար դատուելուն պատճառաւ շիտթու-
թիւն ծագեցաւ, որովհետև դիւանը կրտսր,
«Սահմանադրութեան կուզէք թէ ո՛չ»: Հարկաւ
ո՛չ որ կրտսր թէ Սահմանադրութեան հակառակ
կուզեմ վարուիլ. անոր համար քուէարկու-
թեան ձևը պէտք է փոխել և ըսել. «Սահմա-
նադրութեան յօդուածոյն համեմատ կուզէք
թէ վերաքննութեամբ»:

Ս. Նախագահ. — դիւանին կը յանձնարարէ
որ քուէարկութեան ձևը խմբագրէ և ներկա-
յացնէ ժողովոյն:

Դիւանը կը ներկայացնէ հետևեալը. «Սահ-
մանադրութեան տրամադրութեանց համեմատ
կատարուի թէ վերաքննութեամբ»:

Դիւանին առաջարկած ձևը ոմանց հաւա-
նելի չը թուելով՝ դիտողութիւններ կը լլան, և
այս մասին խօսք ուզողներուն դիւանը կարգաւ
խօսք կուտայ, միայն քուէարկութեան դրուե-
լիք բառերուն վրայ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կարծեմ անցեալ
նիստին քուէարկութեան ձևին խմբագրութիւնն
ալ այդպէս էր. բայց ատոր դէմ հազարամէկ
առարկութիւններ կրնան ըլլալ. չասոր համար
էր որ անցեալ անգամ քուէարկութեան դրու-
ուելու միջոցին շիտթ ծագեցաւ, չըլլայ որ այս
անգամ ալ նոյն տեսակ շիտթութիւններ պա-
տահին: Ուստի ես իմ մասին չեմ կրնար ըմ-
բռնել այդ նախադատութեան խմբատը. վե-
րաքննութեամբ ըսելով ի՞նչ կը հասկընանք.
թէ որ կարող է մէկը բացատրել, թող համոզէ
դիս:

ԵՌԻՍՏՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կարծեմ թէ կըր-
նանք գտնել այնպիսի ձև մը, որ երկու կողմը
միանգամայն գոհ ընէ. ես կառաջարկեմ ստ
ձևն ընդունիլ. «Սահմանադրութեան 38 ըդ-
յօդուածը վերաքննութեամբ գործադրուի՝ թէ
անստիտուս»:

ՓԱՓՍՁԵԱՆ ԷՖ. ԵՒ ԱՅԻՔ. — (Ընդմի-
ջելով) Ո՛չ. ո՛չ. 37 ըդ. յօդուածին վրայ է
բուն խնդիրը:

ԵՌԻՍՏՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — (չարունակելով)
Փարսագեան էՖ. շատ կը սխալի երբ կըսէ թէ
ընտրութիւնը Ս. Պատրիարքին տալու կամ
չը տալու վրայ է խնդիրը: Երբ առաջարկուի
թէ Սահմանադրութեան 38 ըդ. յօդուածը վե-
րաքննութեամբ թէ առանց վերաքննութեան
գործադրուի, եթէ մեծազոյն մասն առանց վե-
րաքննութեան ընդունի, բնականաբար Սահ-
մանադրութեան համեմատ կը լլայ. իսկ թէ որ
վերաքննութեամբ որոշուի, այն ատեն եղած
առաջարկութիւններէն որն որ ընդունելի է
այն կը գործադրուի: Եթէ իմ առաջարկած
եղանակը քուէի դրուի, ամենուն կարծիքը կը
միանայ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ճիշդ Երեսուֆեան
էՖէնտի ըսածին պէս՝ խնդիրը Սահմանա-
դրութեան 38 և 37 ըդ. յօդուածները վերա-
քննութեամբ ընդունուելուն կամ չընդուն-
ուելուն վրայ է. բայց որովհետև քուէթղթին
վրայ երկար բաներ չը կրնար գրուիլ, անոր
համար պէտք է Սահմանադրութեամբ կամ վե-
րաքննութեամբ բառերը գրուին. ոչ որ կար-
գիլէ Երեսուֆեան էՖէնտին և ուրիշները, որ
իրենց քուէթղթին մէջ յօդուածներն ալ յաւել-
ցընելով գրեն: Ես չեմ հասկնար թէ ինչո՞ւ
կը պնդեն ասոր վրայ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Առաջարկուած քուէ-
արկութեան ձևին վրայ պզտի բացատրութիւն
մը կուզեմ տալ: Ես չը հասկըցայ թէ վերա-
քննութեամբ ի՞նչ նշանակել կուզուի: Սոյն
Ընդհ. ժողովը Սահմանադրութեան ինչ ինչ
տրամադրութիւնները վերաքննելու և գործադ-
րելու է. նոյն իսկ Քաղ. ժողովոյ ընտրութեան
յօդուածն ալ վերաքննած ու գործադրած է.
չը հասկցայ թէ Ընդհ. ժողովն իրեն կը վերա-
պահէ ուղած ատենը փոխելու և վերաքննածը
նորէն վերաքննելու. կուզե՞ որ վերադառնայ
արդէն որոշուած խնդրոյն վրայ. եթէ այս.
պէս պիտի ըլլայ, այսօր հոս նիստ ընելու ան-
գամ ներքի չէ մեզ, որովհետև 66 երեսու-
խան ներկայ է, մինչդեռ Սահմանադրութիւնը
71 երեսուխանաց ներկայութիւն կը պահանջէ:

ՓԱՓՍՁԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Օտ-
եան էՖ. կը շեղի խնդրէն. Քաղ. ժողովոյ
ընտրութեան վերաբերեալ յօդուածը վերաքն-
նուած չէ արդէն. որոշում մը տրուել է 29
հոգիով, բայց այն որոշումը վերաքննութիւն
ըսել չէ. մենք արդէն նախորդ նիստերուն
մէջ խօսած ենք ատենց վրայ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ուրեմն եղելութիւն-
ներն ուրանալու շարի համարձակութիւն ունիք.
ով որ ո՛չ կըսէ, եղելութիւնն ուրանալու հա-
մարձակութիւնը թո՛ղ ունենայ:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — (տօգոհելով)
Ինչո՞ւ կարգիլէք Օտեան էՖէնտի խօսքը:

Այս պահուս չունչ կընթանայ ժողովոյն
մէջ, և խօսից կարգը կը խանդարի:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սրբազան Հայր,
յուզղութիւն հրաւիրեցէք որ խօսիմ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ինչպէ՞ս կուզէք որ Սը-
բազան Հայրը ժողովն ուղղութեան հրաւիրէ,
երբ դուք Նորին Սրբազնութիւնը ուղղութեան
կը հրաւիրէք և անցեալ որ դիւանին բարձրէն
զինքը կը սաստէք. հետևաբար ժողովուրդը կը
ծափահարէ: Ժողովուրդը ծափահարելու իրա-
ւունք չունի: Ես կը բողոքեմ դիւանին դէմ,
և այս բողոքս ընելու համար էր որ այսօր դի-
ւանի պաշտօն չընդունեցայ:

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Զարմանալի է որ
անցեալ նիստին երեսուխանք ոմանք ճարտա-
րութեամբ քուէին ժողովը սահմանա-
դրութեան դէմ հանել, և հիմա երբ տեսան
որ Սահմանադրութեան համեմատ քուէի կը
գրուի, սթափեցան, գործը կընդունին և բա-
ուը կը մերժեն. արդէն ժողովն ընդունած էր
այդ ձևը, երբ Սահմանադրութիւն և Մրազիր
բառերով քուէ տրուեցաւ, և անոր համար էր
որ Ռուսիեան էՖ. քուէ տալու կամաչեմ ը-
սաւ: Եթէ բառը կը խորտակեցնէ զիրենք, թող
Սահմանադրութեամբ ուղղը ձերմակ թուղթ
ձգէ քուէ տուիլն մէջ, և վերաքննութեամբ
ուղղն ալ գրուած թուղթ մը:

Հանդիսականաց կողմէ ծափահարութիւն-
ներ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ծափահարութեան վրայ
խօսք ունիմ: Ժողովուրդը երբ հոս ներկայ է,
իրաւունք չունի ո՛չ հաւանութեան և ո՛չ ան-
հաւանութեան ցոյցեր ընելու. իրաւունք չու-
նի մեր կարծեաց և մեր քուէներուն վրայ աղ-
ղեցութիւն բանեցնելու. մենք պէտք է որ
անկախ կերպով հոս շարժինք. եթէ ժողովուր-
դը կուզէ որ իր երեսուխաններն անկախ ու
ազատ լինին իրենց խղճին առջև, պէտք չէ որ
Ծափահարէ և աղղեցութիւն բանեցնէ:

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿ. — Կառաջարկեմ որ եթէ

թուոյն վրայ է խնդիրը, 20 ուղղը 20 դրէ և
պակաս ուղղը պակաս դրէ:

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Կերկրորդեմ Երեմիա
կալիսկոսոսի առաջարկութիւնը:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Քուէարկութեան կտու
նը եղանակին վրայ խօսք պիտի լինի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. Գիւանին վրայ 8 — 9 ա-
ռաջարկութիւն կայ. անոնցմէ մէկը միայն Սահ-
մանադրութեան տրամադրութեանց համաձայն
ըլլալ կառաջարկէ. եթէ վերաքննութեամբ ըլ-
լան որոշուի, այն ատեն միւս առաջարկու-
թեանց վրայ պիտի խօսուի:

ՓԱՓՍՁԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՛վ որ կըսէ թէ
10 ի կամ 20 ի խնդիր է՝ շատ կը սխալի. Թը-
ւոյն վրայ արդէն խօսեցանք, պէտք չէ ետ
դառնալք: Քուէարկութեան դալով՝ ո՛վ որ
Սահմանադրութեան տրամադրութեանց հա-
մեմատ կուզէ, թող ձերմակ քուէ տայ, և վե-
րաքննութիւն ուղղը թո՛ղ դրէ քուէթղթին
մէջ:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Յաւօք սրտի կը
տեսնեմ որ երեսուխաններէն ոմանք հակա-
սութեան մէջ կը գտնուին. ասկէ առաջ երբ
կը կարծէի թէ ժողովը Ս. Պատրիարքին գիկ-
տատորութիւն տուել է, դիկտատորութիւնը
հերքելին:

Ստենապետ էՖ. ընդմիջելով Ատենաբանը՝
կաղղարարէ խնդրոյն կարգէն չը շեղիլ:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Եթէ վերաքն-
նեալ չէր, նախորդ Քաղ. ժողովն ալ հակա-
սահմանադրական համարուելու էր: Ես կա-
ռաջարկեմ որ սա՛ պէս քուէի դրուի. «Քաղ.
ժողովոյ ընտրութիւնը Սահմանադրութեան վե-
րաքննեալ յօդուածոյն համաձայն ըլլայ թէ ո՛չ»:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Կը յայտարարեմ ժող-
ովոյն որ եթէ ես ալ ձեզի պէս երեսուխան եմ
լնչպէս որ դուք ազատ էք, ձեզմէ մէկը երբ
ուզէ կընէ կերթայ և մարդ բան չըսէր, ես
ալ իրրե երեսուխան կրնամ երթալ. երբ ի-
րերը ա՛յն աստիճանի կը հասնին՝ որ ալ հան-
դուրծել կարելի չէ, Հայոց Պատրիարքն ալ
իրրե երեսուխան պէտք է իրաւունք ունենայ
ժողովէն դուրս ելնելու: Դուք զիս թշնամանե-
ցիք, ժողովուրդն ալ ծափահարեց, ոմանք ալ
մեղադրեցին այս բանը, և իրաւունք ունին.
Հանդարտութեամբ կը տանիմ ամեն թշնամանք:
171

որչափ կուզէք թշնամանեցէք, բայց ժողովոյն մէջ չը կրնար ըլլալ, զի այդ թշնամութիւն Ազգին և ձեզ կը վերաբերի: Հիմա պէտք է անուշտ պահանջէք ինձմէ որ նորէն ուխտեմ Սահմանադրութեան գործադրութիւնը. անցեալ որ կրճիկեան էֆ. լաւ խօսեցաւ որ եթէ Հայոց համար կառավարութեան օրէնք մը կայ, Սահմանադրութիւնն է այն. պէտք է ժողովը կամ Սահմանադրապէս ընթանայ կամ բոլորովին դադարեցնէ: Ես այն օրը՝ որ զիս Պատրիարք ընտրեցիք, իբրև մարգարէ զգացի, թէ այս Սահմանադրութեան օրէնքները կէտ առ կէտ գործադրել անհնարին է. անոր համար ողւոյն և սկզբանց վրայ ուխտեցի, և նոյն ուխտին համեմատ շատ մը յօդուածներ Սահմանադրապէս չեն գործադրուած. եթէ ճշդիւ և կէտ առ կէտ գործադրութիւն կը պահանջէք, պէտք է որ դուք ալ երդմամբ ապահովեցնէք զիս, մինչև հիմա եղած խոտորումներն ուղղէք և ամեն կէտի մէջ ճշդութիւն գործածէք, որպէս զի անպատեհ բողոքներու վերջ տրուի: Բայց դուք չեմ գիտեր թէ կարող էք այդ երդումն ընել. եթէ կարող էք, Պատրիարքն ալ կրնայ հսկել Սահմանադրութեան կէտ առ կէտ գործադրութեան. մինչև որ այս առաջարկութեանս պատասխան չը տաք, չէք կրնար քուէարկութիւն ընել:

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍ. — Այո՛, պէտք է որ երեսփոխանք ալ ուխտեն:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — Անցեալ նիստին երբ ըսի թէ ժողովը կատակերգական կերպարանք առաւ, բազումք ինձ դէմ բողոքեցին, բայց իրաւունք չունէին. թէ որ այս տեղ ժողով է, խորհրդակցութիւն և հակաճառութիւն պիտի ըլլայ. խօսողը ընդմիջել չըլլար, զի ընդմիջումը բռնաբարում կը նշանակէ:

Ատենապետ էֆ. կը յիշեցնէ Ատենաբանին թէ վիճարանութիւնը գոցուած ըլլալով՝ ուրիշ խօսք չը կրնար ընել, այլ միայն քուէարկութեան վրայ եթէ ըսելիք մը ունի, կրնայ խօսիլ:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — Քուէարկութեան ձևին գալով, կառավարիկն որ Սահմանադրութիւն բառը բոլորովին վերցուի, և լոկ սա՛ բառերով քուէի դրուի. • վերաքննութեամբ ըլլայ թէ ոչ •:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Ես ալ առաջարկութիւն մ'ըրի. օգին մէջէն խօսք չէր զրուցածս, ա-

ռաջարկութիւն մ'էր, որուն ընդունելութիւնը կամ մերժումը պէտք է որոշուի.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Հայր, ձեր առաջարկութիւնը նոր է. այսօրուան քուէարկութիւնը պէտք է ըննայ, այնուհետև ձեր առաջարկութիւնն ալ խնդրոց կարգը կանցնի:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ս. Նախագահն այնպիսի առաջարկութիւն մը կընէ, որ վիճարանութեան գոցուելէն առաջ պէտք էր ընել, չըրաւ և դժբաղդարար այսօր կընէ. բայց չենք կրնար դայն խնդրոց ներքև առնուլ քանի որ վիճարանութիւնը դադարած է. այլ քուէարկութիւնը կատարուելէ ետև կրնանք դայն խնդրոց կարգը դնել և 'ի նկատի առնուլ թէ Սահմանադրութեան ո՞ր յօդուածներն են՝ որ չեն գործադրուած, ինչպէս ինքը կըսէ: Ուստի դառնալով քուէարկութեան խնդրոյն, կը ձայնակցիմ այն առաջարկութեան՝ թէ Սահմանադրութեամբ ուղղու ճերմակ քուէ տայ, իսկ վերաքննութեամբ ուղղու գրէ իւր քուէթղթին մէջ:

ԻՍԹԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Անոնք որ գաղտնի քուէարկութիւն առաջարկեցին, հիմա ալ կառավարիկն որ Սահմանադրութեամբ ուղղու ճերմակ քուէ տայ. բայց ճերմակ քուէն ոչինչ ըսել է և քուէ չը նշանակէր. ուստի կը հերքեմ այդ առաջարկութիւնը:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Կերևի որ իմ առաջարկութիւն լաւ մը չը հասկցուեցաւ. ուստի կրկին կը յայտարարեմ որ եթէ Սահմանադրութեան հսկող Հայոց Պատրիարքն է, ձեռքըս տուէք որ հսկեմ. մինչև որ այս Սահմանադրութիւն կէտ առ կէտ գործադրելու համար երդում չը պահանջէք, անկարելի է որ քուէարկութիւն ընէք. եթէ Հայոց Պատրիարք երդում կընէ Սահմանադրութիւն կէտ առ կէտ գործադրելու, պէտք է որ Երեսփոխանք ալ նոյն երդումն ընեն: Անուշտ ամեն ազգայինք և նոյն իսկ Երեսփոխանք գիտեն որ երկար առնել 'ի վեր այս ժողովք բացուած է Սահմանադրութիւն վերաքննելու համար. ամեն ոք գիտէ թէ Սահմանադրութիւն վերաքննութեան ենթարկուեցաւ. բայց ո՞ր է վերաքննութիւն, և մինչև ո՞ր հասած է. բոլորովին հակասութեան մէջ ինկած է այս կէտը. ես այսօր կը հարցնեմ թէ Սահմանադրութիւն վերաքննութեան մէջ է թէ ո՛չ. եթէ վերաքննութեանէն հանել կուզէք, պէտք է որ դուք ինձմէ և ես

ձեզմէ երդում պահանջենք. ըսէ՛ք ինձ, վերաքննութեան մէջ է թէ ո՛չ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ս. Նախագահին ուղղելով) Սահմանադրութիւնը թէ և վերաքննութեան մէջ է, բայց գործադրութեանէ դադարած չէ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ըստ իս վիճարանութիւնը գոցուած չէ. Սահմանադրութիւնը կըսէ թէ խնդիր մը չի լուսաբանուած քուէի չը կրնար գրուիլ. պէտք է որ տակաւին լուսաբանուինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը դարմանամ որ չորս նիստերէ 'ի վեր եղած վիճարանութիւններէն իրիկձեան էֆ. բան մը չէ հասկցեր և դեռ լուսաբանուիլ կուզէ. բայց ինչպէս արդէն ըսի, նորէն կըսեմ որ վիճարանութիւնը դադարած է. ուստի վիճարանութեան համար խօսք չունիք:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Դիւանը կարող չէ բռնութեամբ արգիլել զիս. ժողովին ալ պէտք է հարցուի:

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Դարձեալ կը յայտարարեմ թէ իմ առաջարկութիւն ո՛չ Դիւանը հասկցաւ և ո՛չ ժողովը. առաջարկութիւն մը երբ սոսկ Երեսփոխանի մը կողմէ կուգայ, կըրնայ ըսել Դիւանը թէ գործը վերջացած է. բայց երբ Հայոց Պատրիարքի կողմէ կուգայ առաջարկութիւնը, պէտք է յարգուի. եթէ չը յարգուի Պատրիարք ուրիշ բան մը չունի ըսելիք, բայց այս միայն. ընտրեցիք Տեղապահ Կաթիկոսոս մը, որ մինչև ցաւարտ վերաքննութեան իմ տեղս գործէ, և ես կըստասեմ մինչև վերաքննեալ Սահմանադրութիւն դայ: Արդ, քիչ մը առաջ առաջարկութիւն մ'ըրի, դայն կը կրկնեմ. անկարելի է որ քուէարկութիւն ըլլայ մինչև չորոչէք որ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ պիտի գործադրուի՞ թէ ո՛չ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ս. Նախագահին ուղղելով) Ձեր առաջարկութիւնը՝ ինչպէս Ըսի, նոր է, և խնդրոց կարգը կրնայ անցնիլ:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ս. Նախագահին առաջարկութիւնը ծանր ըլլալուն այժմէն կարող չեմ սրտասխանել. միայն քուէարկութեան վրայ խօսելով կըսեմ որ եթէ առաջարկուած քուէարկութեան ձեւն ընդունուի, երեսփոխանք շատ պիտի շիտիին. կը տեսնեմ որ ոմանք մասամբ իւրք զէնք ըրած են Սահ-

մանադրութիւնը և կը կարծեն թէ միայն իրենք կը սրտասխանեն. ո՞վ կրնայ ըսել թէ Սահմանադրական չեղող մարդ կայ հոս . . .

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — (Ընդմիջելով) Իրիկձեան էֆ. եթէ վիճարանութիւն բանալ կուզէ, պէտք չէ որ թոյլտուութիւն ըլլուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իրիկձեան էֆ. խնդրէն դուրս իրաւունք չունի խօսելու:

Իրիկձեան էֆ. կը յամառի և կը սնդէ խօսիլ: Այս միջոցին ձայներու շիտիութիւն մը կը տիրէ և շատ մը նստարաններու վրայէն զանգատներ կը լսուին: Հետեւարար դիւանի կողմէ 10 վայրկեան դադար տրուելով յուգմունքը կը վերջանայ:

Ատենանը վերստին կը բացուի ժամ 9 ին, և խօսելու կարգը Խորէն Կաթիկոսոսինն ըլլալը Դիւանէն կը ծանուցուի:

ԻՌԻԷՆ ԵՊԻՍ. — Տեա՛րք իմ, քանի որ ընդունուեցաւ քուէարկութեան որոշումը, և դժուարութիւնը միայն մնաց ձևին մէջ, կը խնդրեմ որ այնպիսի պարզ և դիւրին եղանակ մը ընտրենք, որով կարելի լինի ամեն ժխոր և հերձուած հեռացնել: Ինձ այնպէս կը թուի թէ առաջիկայ քուէարկութեան արդիւնքը Ս. Պատրիարքին առաջարկութեանն ալ պատասխան պիտի լինի, քանի որ իւր առաջարկութեան նպատակն է որոշել թէ արդի Սահմանադրութեան տրամադրութիւններն պիտի սրտասխանուին թէ ո՛չ: Եթէ քուէարկութեան արդիւնքը վճռէ թէ Քաղ. ժողովը ընտրութիւնն ըստ Սահմանադրութեան կատարուի, Սրբազան Հօր առաջարկութիւնը գործնականապէս լուծուած կըլլայ: Ես բազմաց հետ խորհրդակցելով քուէարկութեան համար առաջարկութիւն մը խմբագրեցի որ սա է. «Սահմանադրութեան 56 և 57 ըր յօդուածները նոյնութեամբ գործադրել թէ վերաքննութեամբ» Այս առաջարկութեան համեմատ՝ ո՞վ որ կամենայ նոյնութեամբ կը գրէ իւր քուէթղթին մէջ, և ո՞վ որ կամենայ վերաքննութեամբ կը գրէ, և այսպէս ամենայն շիտիութիւն կը վերջանայ: Ոմանք յամառեցան և գուցէ դեռ ևս յամառին թէ 20 թուոյն վրայ է տարբերութիւնը. բայց խնդրեմ ուշադրութիւն ըրէք. թիւը չէ որ երկու կողմ կը բաժնէ զմեզ. վասն զի առաջարկող ալ կայ որ 20 թիւը սրտուի, բայց ընտրութիւնը ներկայ Սահմա-

Նաղարութեան եղանակին համաձայն չըլլայ :
Կարծեմ թէ այս առաջարկութիւնս կը դիւ-
րացնէ ամեն բան և շիտակից առիթը կը վեր-
նայ . ուստի կը յանձնեմ առաջարկութիւնս
Գիւանին :

Քանի մը երեսօրիականներ կը կրկնեն խորհն
Սրբազանի առաջարկութիւնը :

Գիւս նը խորհն Սրբազանի առաջարկութեան
թուղթն ստանալէ ետև , տեսնելով որ ընդ-
դէմ խօսող մը չըլլայ , նոյն առաջարկութիւնը
ընդունուած կը հրատարակէ և քուէի դնելէ
առաջ Սահմանադրութեան 53 և 57րդ յօդ-
ուածները , 'ի շուր ժողովոյն կընթեանս , խօ-
րհն Սրբազանի առաջարկութեան խմատին
համեմատ բացատրելով թէ՛ ով որ յիշեալ
յօդուածներուն բառ առ բառ գործադրու-
թիւնը կը պահանջէ , պէտք է իւր քուէ-
թղթին մէջ նոյնութեամբ գրէ , և ով որ վե-
րաքննութիւն կը պահանջէ՝ պէտք է վերաքն-
նութեամբ գրէ :

Հետևապէս գաղտնի քուէարկութեան հա-
մար քուէթղթեր կը ցրուին ժողովականաց , և
այս միջոցին Ս . Նախագահը խօսք կառնու
Գիւանին :

Ս . ՆԱԽԱԳԱՀ . — Ընդհ . ժողովը քուէ-
արկութեան կը ձեռնարկէ , թէև իրաւունք
չունիմ բանաձայն ժողովոյն կատարելիք քուէ-
արկութեան վրայ . սակայն բացատրութիւն
կուզեմ գիւանին , որ քուէարկութեան արդիւն-
քին թէ Սահմանադրութեան գործադրու-
թիւնը վնասէ , արդեօք պիտի հասկցուի թէ
Քաղ . ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդ-
ուածին հետ Սահմանադրութեան միւս յօդ-
ուածներն ալ պիտի գործադրուին , ինչպէս
սրահ մը առաջ ակնարկելու զի Սրբա-
զան . ապահովութիւն կուզեմ թէ ներկայ
Սահմանադրութիւնը այսուհետև կէտ առ կէտ
պիտի գործադրուի թէ ոչ : Այս ապահովու-
թիւնը կը պահանջեմ Գիւանին , և ես առ-
այժմ կը մեկրիմ , յանձնարարելով Գիւանին՝
որ քուէարկութեան արդիւնքը գրով հաղորդէ
ինձ , որպէս զի ըստ այնմ պէտք եղած պա-
տասխանը տամ :

Ս . Նախագահը ժողովն մեկնելու ատեն՝
թէև տեանց կողմէ կառաջարկուի որ Երեմիա
Եպիսկոպոս փոխանորդարար նախագահէ՝ ժո-
ղովին : Բայց Գիւանը հարկ չը տեսնէր , և ա-
ռանց նախագահի քուէարկութեան ձեռնար-

կելով չորս քննիչ կորուչ , երկու եկեղեցական
և երկու աշխարհական , որոց ներկայութեան
քուէհամարը կը կատարուի , և հետևեալ ար-
դիւնքը կուեննայ .

Թիւ քուէարկուաց	70
Նոյնութեամբ քուէ	51
Վերաքննութեամբ քուէ	59
	70

Հետևապէս 51 քուէի դէմ 59 քուէով ըն-
տրուի որ Քաղ . ժողովոյ ընտրութիւնը Սահ-
մանադրութեան 56 և 57րդ յօդուածոց վե-
րաքննութեամբ կատարուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Քուէարկութեան ար-
դիւնքը՝ Սահմանադրութեան 56 և 57րդ յօդ-
ուածոց վերաքննութիւնը կը վնասէ . ուստի
Քաղ . ժողովոյ ընտրութիւնը վերաքննութեամբ
պիտի կատարուի : Արդէն անցեալ նիստին
բաւական գրաւոր առաջարկութիւններ ներ-
կայացան գիւանին , որպէս զի վերաքննու-
թիւն որոշուած ատեն նկատարութեան առնը-
ուին : Հետևապէս գիւանը կը պարտաւորի դա-
նոնք մի առ մի ժողովոյն ուղարկութեան ներ-
կայացնել :

ՕՏԵՍՆ Գ ԷՖ . — Կը յիշեցնեմ որ՝ նախ
քուէարկութեան արդիւնքը պէտք է հաղոր-
դուի Ս . Պատրիարք Հօր , ինչպէս որ յանձնա-
րարած էր Գիւանին :

ԽՈՐԷՆ ԵՊԻՍՏ . — Աւելի լաւ կըլլայ կար-
ծեմ , որ առաջարկութիւնները քուէի դրուելէ
ետև վերջին արդիւնքը հաղորդուի Ս . Պատ-
րիարքին :

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍՏ . — Ս Պատրիարքին խօսքը
բացորոշապէս կը յայտնէր որ ժողովոյն որոշ-
ման արդիւնքն իրեն հաղորդուի :

Գիւանին առաջարկութեամբ ժողովը կորու-
չէ , և Կ . Պօլսոյ ու Երուսաղէմաց Պատրիար-
քական փոխանորդները կերթան հաղորդել Ս .
Պատրիարք Հօր՝ ժողովոյն քուէարկութեան ար-
դիւնքը :

ԵՌԻՍՏՈՒՑԵԱՆ Տ ԷՖ . — Քանի որ վերա-
քննութեամբ կատարելու որոշումն եղաւ , կը
յիշեցնեմ որ տեանք Քաղ . ժողովոյ ընտրու-
թեան վրայ թէև տարբեր առաջարկութիւններ
էին ըրած , սակայն 'ի վերջոյ լրարու հետ
համաձայնեցան : Արդեօք չը կրնար ըլլալ որ
այդ առաջարկութիւններն իրարու հետ բաղ-

դասելով՝ մէկդմէկու նմանները միացուին և
ամբողջութեամբ գիւրութեան համար :

Այս միջոցին Ս . Նախագահը կը ներկայա-
նայ և կը բազմի իւր աթոռոյն վրայ :

Գիւանը կը ծանուցանէ Ս . Նախագահին որ
ժողովը գաղտնի քուէարկութեամբ որոշած է
Քաղ . ժողովոյ ընտրութիւնը վերաքննութեամբ
կատարել : Յետոյ կը ներկայացնէ 10 գրաւոր
առաջարկութիւններ , որք նախորդ երկու նիս-
տերու վիճարանութեանց միջոցին՝ երեսօրիա-
նաց ոմանց կողմէ մատուցուած էին գիւանին :

Ահաւասիկ նոյն առաջարկութիւններն որ
ըստ կարգի կարդացուեցան յատենի ժողովոյն .

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ 19 ՄԱՅԻՍԻ ՆԻՍՏԻՆ

1 .

Առաջարկութիւն Երեմիա Եպիսկոպոսի

Ազգ . Քաղ . ժողովը 20 հոգիէ բաղկանայ ,
10 ը գործադիր և 10 ալ խորհող ժողով անու-
նը կրէ , և այս անուան ասի գործէ :

2 .

Առաջարկութիւն Փափաղեան էֆէնտիի

Ազգ . Քաղ . ժողովը 20 հոգիէ բաղկանայ ,
10 ը ընթացիկ գործոց և 10 ը տեսուչ խոր-
հորդոց հետ յարաբերութիւն ունենայ :

3 .

Առաջարկութիւն Իսթիւճեան Կ . էֆէնտիի

Քաղ . ժողովոյ անդամոց թուոյն և ընտրու-
թեան եղանակին վերաբերեալ յօդուածը այս
կերպիւ չափաւորի , ինչպէս որ արդէն չա-
փաւորուած է նախորդ Քաղ . ժողովոյ ընտրու-
թեան աթիւ :

1 . Քաղ . ժողովոյ անդամոց թիւը 9 անդա-
մէ բաղկանայ , և սկզբամբ իրարու համամիտ
անձինք լինին , որպէս զի կարենան գործ տես-
նել :

2 . Ընդհ . ժողովը մասնաժողով մը անուա-
նէ , որ Ս . Պատրիարքին հետ խորհրդակցելով
կրինապատիկ ընտրելեաց ցանկ մի պատրաս-
տեն և Ընդհ . ժողովոյ ընտրութեան ներկայա-
ցընեն :

4 .

Առաջարկութիւն Իփէկճեան Հ . էֆէնտիի

Քաղ . ժողովոյ անդամոց ընտրութիւնը Ս .
Պատրիարքին յանձնել . (հասկանալի է որ այս
կերպով ընտրուած ժողովը միայն Ս . Պատրի-
արքին պատասխանատու չէ , այլ և Ընդհ . ժո-
ղովին) :

5 .

Առաջարկութիւն Օսկանեան Խ . էֆէնտիի

Սահմանադրութեան 53 րդ . յօդուածը
փոխուի յետագային և այս օրէն Քաղ . ժողովոյ
անդամոց թիւն 9 անձերէ բաղկանայ :

6 .

Առաջարկութիւն Պէկեան Թ . էֆէնտիի

Քաղ . ժողովոյ անդամոց թիւը 10 անձերէ
բաղկանայ և Ընդհ . ժողովն ընտրուի , և այս
անդամոց մէջ համամտութիւն գոյացնելու հա-
մար , ընտրութեան մասին ուղարկութիւն ըլ-
լուի :

7 .

Առաջարկութիւն Օգոսէն էֆէնտիի

Քաղ . ժողովը Սահմանադրութեան տրա-
մադրութեանց համաձայն ընտրել :

8 .

Առաջարկութիւն Երուսաղէմեան էֆէնտիի

Կընդունի հետևեալ առաջարկուած միջոց-
ները թէ՛

1 . Ընդհ . ժողովն ընտրէ ատենապետ մը և
անոր յանձնէ իւր ընկերաց ընտրելեաց ցու-
ցակը պատրաստել , որ Ընդհ . ժողովոյն բերէ
և անոր վրայ քուէարկութիւն ըլլայ :

2 . Ընդհ . ժողովոյ գիւանին յանձնել , որ
Ս . Պատրիարքին հետ ընտրելեաց ցուցակ մը
պատրաստէ և Ընդհ . ժողովոյ ներկայացնէ :

5 . Քաղ . ժողովոյ անդամոց թուոյն 20 ըլ-
լան անկորդ կը համարի , և կառաջարկէ որ
հրաժարեալ Քաղ . ժողովոյ ընտրուած եղանա-
կին համեմատ կատարուի ընտրութիւնը :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ 26 ՄԱՅԻՍԻ ՆԻՍՏԻՆ

9 .

Առաջարկութիւն Պատնասեան Պ . էֆէնտիի

Քաղ . ժողովոյ ընտրութեան վերաբերեալ
Սահմանադրութեան յօդուածը սրբադրուի
գործնական եղանակաւ մը . այսինքն՝ ստատու-
խանատու ըլլալու պայմանաւ , Ընդհ . ժողովը
Քաղ . ժողովոյ ատենապետ մը ընտրէ և անի-
կոյ իւր ընկերներն որոշելով՝ անոնց ցուցակը
ներկայացնէ և Ընդհ . ժողովն ալ փաւերացնէ :

10 .

Առաջարկութիւն Խորհն Եպիսկոպոսի

Քաղ . ժողովոյ ընտրութիւնը կատարուի
Ընդհ . ժողովոյ ձեռքով , ցուցակի մը մէջէն ,
զոր Ս . Պատրիարքը Ընդհ . ժողովոյ գիւանին

հետ խորհրդակցութեամբ ներկայացնել : Քաղ. ժողովը սրբառեակէ Կայլ և այլ ճիւղեր կամ յանձնախմբեր, այսինքն յարարութեանց, դատախարակութեան, երեսնական և կարուածական, ամեն մէկ ճիւղէ ական անգամ ունենայ և Քաղ. ժողովոյ թիւը 20 ըլլայ : Ս. Պատրիարքը նորոգ կազմելի էրդ. ժողովոյ զիւանին հետ ներկայացնեն երեք ընտրելի յանձնապետութիւն այսպիսի Քաղ. ժողովոյ մը այն ատենապետը մեր ընտրութեանէն յետոյ ներկայացնել մեզ ճական ընտրելի դատախարակութեան, երեսնական և կարուածական ճիւղերու մասնապետութեան, մասնապետը ներկայացնեն կրկին թուով իրենց ճիւղին անդամները, որ և վաւերանան մեր քուէից բացարձակ օտաւերութեամբ :

ԵՌՍՈՒՖԵՍՆ Տ. ԷՖ. — Տեաք խմբ. որովհետեւ մեծ դժուարութիւն կայ այսօր այդչափ առաջարկութիւններն ամբողջութեամբ կամ քուէի դնելու համար, կառավարիւմ որ ըստ որում արդէն օրն ալ տարածումը է, այդ առաջարկութեանց հեղինակները մինչև յաջորդ նիստին բանակցելով իրենց մէջ միանան, և հնար եղածին շտի ամբողջութեամբ ներկայացնեն յաջորդ նիստին :

Եւսուֆեան էֆէնտի ձայնակցելով շատ մը երեսօխոսաններ կը կրկնեն անոր առաջարկութիւնը :

ԱՊՐՈ Ս. ԷՖ. — Նկատելի կէտ մը կայ, այն է թէ՛ Քաղ. ժողովոյ համար 20 թիւն արդէն մերժուած է ժողովոյն որոշմամբ. 40 կրնայ ըլլալ, բայց ո՛չ 20 :

ԻՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ. — Ըստ որում վիճարանութիւն չը պիտի ըլլայ առաջարկութեանց վրայ, ուստի կը խնդրեմ որ յաջորդ նիստին մնայ այս խնդիրը :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Ապրո էֆ. ժողովոյն որոշումը սխալ ըմբռնած է. ժողովը չէ թէ մերժեց 20 թիւը, այլ վերաքննութիւնն ընդունեց. կրնայ ըլլալ որ վերաքննութեանէն ետքը դարձեալ Քաղ. ժողովոյ թիւը 20 ընել պատշաճ համարի : Սահմանադրութեան 57-րդ յօդուածն ալ բացարձակապէս կը արամադրէ որ ընտրութիւնն ընդհ. ժողովն լինի. եթէ Ապրո էֆ. ի ըսածին պէս Քաղ. ժողովոյ թիւը 40 կըլլայ, բայց ոչ 20, ուրեմն ընդհ. ժողովն ըլլալը ընտրութեան տեղ ալ ուրիշ տեսակ ընտրութիւն մը պիտի դրուի, հետեւաբար Սահմանադրութեան ամենէն նուիրա-

կան և հիմնական սկզբանց զէմ գործելու պիտի սրբառեակէ ժողովը. լսել է որ Կրեւոյն-խանութեան մեծադոյն մասն իւր քուէն ծախեց :

Փախազեան էֆէնտի վերջին խօսքն զէմ բողոքոյ ազմուկ մը կը բողոքի ժողովոյն մէջ. ումանք կը դուռն. «ժողովը թշտամանեց, թո՛ղ ետ առնու իր խօսքը» :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Ես դիւրութեամբ խօսքս ետ չեմ կոչեր. որովհետեւ Ապրո էֆ. ըսաւ թէ 20 թիւը մերժուած է, ես ալ կրտեմ թէ ուրեմն ժողովն իւր ընտրութիւնն ալ մերժած է :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ժողովոյն տուած քուէն իւրաքանչիւր որ ըստ քննայ ըմբռնելու և թիւը մեկնութիւն մը տալու իրաւունք կրնայ ունենալ. ինչպէս որ Ապրո էֆ. սխալ մեկնութիւն տուաւ, ասանկ ալ փախազեան էֆ. կրնար ուրիշ եղանակաւ իւր դիտողութիւնն ընել, բայց ծախել բառը պէտք չէր գործածել. այս թընտնանիջ բառն եթէ յետոյ չը կոչէ, դիւանին կը մնայ այս մասին պէտք եղածը անորին :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ Աղաբէկեան Մ. էֆ. անցեալ օր իւր բերնէն հանած հակադրային բառն ետ առնու, եթէ Ապրո էֆ. իւր խօսքն ետ առնու, ես ալ պատրաստ եմ իմ կարգիս յետս կոչուիմ ընել :

ԱՊՐՈ Ս. ԷՖ. — Ես երբէք ետ չեմ կրչեր իմ խօսքս, դասն զի ետ կոչելու խօսք մը բրած չեմ և չեմ ընել. ես ազատ եմ ժողովոյն որոշումն ուզած կերպիս հասկնալու. կարելի է սխալ ըմբռնած ըլլամ, բայց երբէք չեմ բռնանար որ ընդհ. ժողովն իմ դադափարիս հետեի :

Ատենապետ էֆ. կը հրաւիրեմ փախազեան էֆ. որ իւր այս խօսքին բացատրութիւնը տայ :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Ս. Պատրիարքին ըսպատանալեացը ծախեցիք ձեր քուէն. ահաւասիկ բացորոշ կըսեմ : (Այս ըսելով ժողովն կը մեկնի) :

ԱՂԱՅԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Փախազեան էֆէնտի թողուլ երթալը պէտք է որ բացատրուի դիւանին կողմէ. հրաժարեալ կը համարուի թէ ո՛չ :

Գիւանը կը պատասխանէ թէ՛ ժողովը չէ զանի ընտրողը՝ որ հրաժարեցնէ. ժողովն ընտրութիւնը միայն կը հաստատէ :

ԿԱՍԻՊԻՆԵԱՆ Մ. ԷՖ. — Աղաբէկեան էֆ. եթէ հրաժարեցնել կուզէ փախազեան էֆէնտին, իրաւունք չունի. անոր զէմ եթէ տիրապետութիւն մը կայ, ծախել բառին համար է, որու պատշաճաւ երբէք հրաժարեալ չը համարուի :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Կարո՞չեմ, խօսքը չերկարեմք. երկու խօսքով պիտի լննուեմ : Երբ ատենաբան մը այնպիսի բառ մը կարտասանէ, որ ժողովոյն զգացումը վերաբերէ և բողոքելու առիթ ապ, պարտաւոր է իւր խօսքն ետ առնալ, իսկ եթէ դժկամեցի՛ դիւանին պարտքն է զինքը՝ ի կարգ հրաւիրել : Բայց փախազեան էֆ. փախանակ յետոյ կոչելու՝ ժողովոյն բողոքանաց ներքեւ ձգեց գնաց. ուստի այսչափ բաւական է և հրաժարեալ համարելն անչորոգ :

ՍԱՐԳՈՍԻՍՏ ՎԱՐԳ. — Օտեան էֆ. աղկ խօսեցաւ և իմ ըսելիքս ալ բացատրեց, միայն մէկ կէտ մը պիտի յաւելցնեմ. Ամեն երեսօխոսան կրնորն իւր երբ ժողովոյն զէմ մէկը անպատեհ խօսք մը արտասանէ, յետոյ կոչուի. բայց ժողովոյն ալ պարտքն է իւր պատկառելի դիրքը սրահելու համար ամեն պարագայի մէջ յարգել, անխտր ամենուն յարգել տալ այս սկզբունքն և շքեքել անպատեհութեանց :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Եթէ իրօք անպատեհութիւն է փախազեան էֆէնտի ըրածը, այն, պէտք չէ ներել : Ժողովն իրաւունք ունէր հարցնել փախազեան էֆէնտին և իր ըրածին բացատրութիւնն ուզել. նա ալ կը պարտաւորէր բացատրութիւն տալ և հաստատել իւր ըսածը : «Ս. Պատրիարքն սպանաւիք ըրաւ և աղղեցութիւն բանեցուց քուէարկութեան վրայ» ըսաւ. պէտք է որ հաստատեցայս, թերևս ինքզինք արդարացնէ :

Ս. ՆԱԽԱԳԱԶ. — Երբէք չեմ կրնար ընդունիլ այդ խօսքերն, զոր ստեղծ կը յեղյեղէք թէ Պատրիարք սպանաւիք կընէ և աղղեցութիւն կը բանեցնէ : Ես եկեղեցական մ'եմ, սուր չունիմ իմ ձեռքս. ինչո՞ւ այդ խօսքերը կընէք : Քուէարկութեան ատեն դուրս ելայ, որպէս զի ժողովն ստանց աղղեցութեան իւր որոշումն ընէ. ես այնչափ ազատ մէկն եմ, որ Սահմանադրութեանէն ալ անդին կանցնիմ. եթէ այդչափ ակնածութիւն կընէք, կրնաք փոխանորդ մը ընտրել որ իմ տեղս նստի, և ձեր ըրած որոշումները ազատորէն ինձ հաղորդէ :

Երբէք չեմ ընդունիր այդ աղղեցութիւն բառը, որ ինձ կուղղուի : Խրթման ուրիշէ

դաս աննող Պատրիարքներէն չէ : Մի՛ կարծէք որ ուրիշ թերադրութեամբ շարժելու շտի ազայամիտ ըլլամ, և աղղին օդուան ու շահը չկարենամ հասկնալ, եթէ ոչ՝ դուք սխալած կըլլաք զիս ընտրելով : Պահ մը առաջ յայտարարութիւն ըրի երեք անգամ, բայց չը կրցի իմ առաջնորդութեան բուն նպատակ ձեզի հասկըցնել. երեք օտրիէ ի վեր Պատրիարք եմ. Սահմանադրութեան տեար մը կայ, որ վերաքննութեան տակ է, անով գործէ կրտեք, բայց ամեն անգամ այդ տեարը վիճարանութեան առարկայ եղած և դմեղ լաբարինթոսի մէջ ձգած է : Ժողովը ինչ նիստ է որ կրնէ, և դեռ Սահմանադրութեան վերաքննութիւնը չը լրացուց. եթէ ինք պիտի վերաքննէ պէտք է որ չուսով կատարէ, և ձեռքս տայ վերաքննեալ Սահմանադրութիւնը, որպէս զի զայն կէտ առ կէտ գործադրեմ : Բայց ես զիտեմ որ ընդհ. ժողովոյ մէջ վերաքննութիւն լինել անկարելի է. ուստի այս է իմ առաջարկութիւն. ընտրեցէք ո՛վ որ կարող է փաստարանել և խմբագրել Սահմանադրութիւնը, որոչեցէք ո՛վ որ ձեռնհասութիւն ունի այս ստատուին, և անոնց յանձնեցէք՝ որ մինչև վեց ամիս ամբողջ վերաքննութիւնը կատարեն, որպէս զի այս առժամելի վիճակէն ազատվեք :

ԵՌՍՈՒՖԵՍՆ Տ. ԷՖ. — Երբէն մենք զըրեթէ ամենքնիս ալ համակործիք ենք Ս Պատրիարքին առաջարկութեան, կը փախազինք ժամ յառաջ Սահմանադրութեան վերաքննութիւնն ամբողջացնել, բայց միշտ մեր զէմ արդեղներ պակաս չեն : Ես արդէն առաջարկութիւն մ'ըրած եմ, Քաղ. ժողովոյ ընտրութեան վերաքննութեան մասին եղած զանազան առաջարկութիւնները միացնելու մտք. թո՛ղ այս առաջարկութիւնս քուէի դրուի, և եթէ ընդունուի, մեծ քայլախօս մը առած կըլլանք վերաքննութեան մասին, և յառաջիկայ նիստին ալ ուրիշ գործադրելի եղանակ մը կրնանք որոշել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Եւսուֆեան էֆէնտի պատասխանելով) Չեր առաջարկութեանց համար կրնաք ձեր մէջ միաբանիլ յառաջիկայ նիստէն առաջ. ստիկայ քուէի դնելու հարկ չիկայ. թերևս ուրիշ առաջարկութիւն ունեցողներ ալ կան, որք յաջորդ նիստին ներկայացնեն իրենց առաջարկութիւնները :

Ս. ՆԱԽԱԳԱԶ. — Ներեցէք, յուզուած լինելով միաքս շիրթած էր, և դեռ չը կրցի հաս-

կըցընել իմ միտքս : Միթէ Սահմանադրութեան Քաղ ժողովոյ վերաբերեալ յօդուածները միայն սրբազրեւով յառաջ պիտի երթանք . կան այնպիսի խնդիրներ ալ , որոնք յիշեալ յօդուածոյն տրամադրութեանց հետ կապակցութիւն ունենալով՝ այս Ընդհ. ժողովոյն պիտի գան . եթէ ստունկ քայլ առ քայլ պիտի կատարուի վերաքննութիւնը , այդ անկարելի է . միւս կողմէ՝ Քաղ. ժողովոյ վերաքննութեամբ ընտրուելու մասին եղած առաջարկութիւնները միացնելու խնդիրն ալ դժուար և կնճառ կերևի ինձ . դուցէ այս խնդիրը բաւականէն աւելի երկարի և Քաղ. ժողովոյ ընտրութիւնն երկարաձգելու տեղի տայ : Ահա՛ այս պատճառով կառավարիւմ դարձեալ որ մինչև 6 ամիս պայմանաժամ որոշուի Սահմանադրութեան ամբողջ վերաքննութիւնը յանձնաժողովոյ մը միջոցաւ կատարուելու համար , և այս միջոցին մէջ Քաղ. ժողովոյ գործերը անօրինելու պաշտօնով ուրիշ առժամանակեայ յանձնաժողով մը օգնական տրուի ինձ :

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ս. Պատրիարքը նոր առաջարկութիւն մը կընէ , որ միւս առաջարկութեանց կարգը պէտք է մանէ . առաջարկողները Ս. Պատրիարքին նախագահութեամբ գումարուելով՝ կրնան խորհիլ ու համաձայնիլ , և յաջորդ նիստին ժողովոյն բերել իրենց համաձայնութեան արդիւնքը : Ուստի այս խնդիրն առ այժմ պէտք է գոցենք :

ՍՎԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Առաջարկութիւն ընողները Ս. Պատրիարքին նախագահութեամբ գումարուելով կրնան միանալ , գործը դիւրացընել և այնպէս բերել Ընդհ. ժողովոյն : Եթէ երկու տարիէ ՚ի վեր Սահմանադրութիւնը չը կրցանք վերաքննել , պատճառն Ընդհ. ժողովոյ մէջ կատարուիլն է . ուրիշ անգամներ ասանկ գործերը մասնաժողովոյ կը յանձնուէին , որ 2 ամսուան մէջ կը լրացնէր և կը բերէր ժողովին :

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ս. Պատրիարքը 6 ամիս պայմանաժամ կառավարիչ Սահմանադրութեան ամբողջ վերաքննութեան համար , բայց փորձով տեսնուած է որ չը կրնար ըլլալ , մանաւանդ որ եթէ վերաքննութիւնը 6 ամսուան մէջ ալ աւարտի , Բ. Դրան վաւերացման պիտի ներկայանայ , որ տարիներ կրնայ տևել : Ուստի կառավարիւմ որ ամեն բանէ առաջ Քաղ. ժողովոյ ընտրութեան վերաբերեալ յօդուածոց վերաքննութիւնը կատարուի :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Սահմանադրութեան վերաքննութեան համար Ս. Պատրիարքը 6 ամիս

միս պայմանաժամ կը դնէ . ևս ալ խտուր պահանջողներէն ևս որ վերաքննութիւնը ժամ յառաջ լրանայ , որպէս զի գայթակղութեան խնձոր չըլլայ . ամենքնիս ալ պարտական ենք վերաքննութիւնը վաւերացնել , սակայն պայմանաժամ դնել անհնար է : Պէկեան է՛ք . առաջարկութիւն մը մէջ բերաւ թէ վերաքննութիւնն աւարտելէն ետև Բ. Դրան վաւերացման պիտի ներկայանայ , և այս առթիւ պիտի երկարի . սակայն փորձն ատոր հակառակը կը վկայէ . մենք մինչև հիմա ինչ ինչ յօդուածներ վերաքննեցինք և գործադրեցինք առանց Բ. Դրան վաւերացնել տալու :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ս. Պատրիարքը կը կասկածի որ վերաքննութիւնը շատ երկար չը տևէ , անոր համար պայմանաժամ կառավարիչ . այս կասկածը տեղի չունի , և վերաքննութիւնը կրնայ շուտով աւարտիլ , որովհետև Սահմանադրութեան ինչ ինչ գլուխներն արդէն վերաքննուեցան , գլխաւորապէս կրօն . և Քաղ. ժողովոց վերաբերեալ յօդուածները . մնացածը շատ դիւրին է :

Ս. ՆԱԽԱԳԱՀ. — Խօսաւորեան և Պէկեան է՛քինտիներու ըսածները սիրով կընդունիմ , այն պայմանաւ՝ որ Ընդհ. ժողովն որոշէ թէ վերաքննեալ մասերը նորէն չը վերաքննուին :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Տարակոյս չըկայ թէ այնպէս պիտի ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս վիճարանութիւնը չենք կրնար շարունակել , վասն զի խնդրէն դուրս է , և արդէն ժամանակն ալ անցած ըլլալով՝ ատեանը պիտի գոցուի : Որովհետև Քաղ. ժողովոյ ընտրութեան յօդուածոց վերաքննութիւնը յաջորդ նիստին պիտի կատարուի , ուստի ինչպէս արդէն խօսուեցաւ , այս մասին առաջարկութիւն ունեցողներն որ առաջ թող միանան և ամփոփելով իրենց առաջարկութիւնը ստորագրեալ բերեն յաջորդ նիստին : Նոյնպէս եթէ ուրիշ առաջարկութիւն ունեցողներ ևս գտնուին , կրնան յաջորդ նիստին ներկայացընել իրենց առաջարկութիւնը , թէև ժողովը վերաքննութեամբ ըլլալ որոշեց , սակայն 51 երեսփոխան ընդունութեամբ . քուէ տուին , թերևս վերաքննութեան վրայ անոնք ալ նոր առաջարկութիւններ ունենան :


Ատեանը գոցուեցաւ ժամ 10 քառորդ անցած , յաջորդ նիստը 15 օրէն գումարուելու որոշմամբ :

ԱՌԺԱՄԱՆԱԿԵԱՅ
ԱՏԵՆԱՊԵՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Յ. ԿՐՃԻԿԵԱՆ Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ :




30 Երևանի Գրականության ընկերություն
1898 թ. 2-րդ համար

ԴԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ



ՍՆՓԱՆԱՆՈՒԹՅԱՆ ԷԶՅԵՑԻՆ ՍՆՏՈՒԿԱՆ



Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գանուի
Եկեղեցեաց բանկաները :